

13

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ
2019

Luys Lnyu®



ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

ՎՐՄՈՒԾՈՒՄ

«ՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՀԱՆԵԼԻ ՀԱՏԿԱԾԻ
ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆԵԼԻ ՀԱՏՎԱԾԻ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԱԽԱԲԱՆ	1
2. ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ	2
3. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՀՀ-ՈՒՄ	3
4. ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	6
5. ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	7
6. ԱՄՓՈՓՈՒՄ	9

1. ՆԱԽԱԲԱՆ

Ապրանքների և ծառայությունների արտահանումը յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման համար ունի անվիճելի կարևորություն¹: Արտահանումը ՀՆԱ-ի մի մասն է, հետևաբար դրա աճը ուղղակիորեն մեծացնում է ՀՆԱ-ի ծավալը: Մյուս կողմից՝ փոքր բաց տնտեսություն ունեցող երկրների համար արտահանումը արտարժույթային եկամուտների աղբյուր է, որը կարևոր է տնտեսության արտաքին կայունության ապահովման տեսանկյունից: Բացի այդ, արտահանման միջոցով երկրները հնարավորություն են ստանում դուրս գալ արտաքին՝ ավելի մեծ շուկաներ, ինչը որոշ չափով լուծում է տնտեսության փոքր լինելու խնդիրը²:

Սակայն, այն տնտեսությունները, որոնք բնութագրվում են ՀՆԱ-ի նկատմամբ արտահանման մեծ ծավալներով, զգալի կախվածության մեջ են գտնվում արտաքին շուկաներից, ուստի արտաքին շուկաներում տեղի ունեցող ցնցումները կարող են նշանակալի ազդեցություն ունենալ այդ տնտեսությունների վրա³: Նշված խնդիրը կարող է լուծում ունենալ, եթե լինի արտահանման կառուցվածքի և ուղղությունների դիվերսիֆիկացիա:

Զուտ արտահանման մեծությունը (արտահանման և ներմուծման տարբերությունը) ունի ուղղակի ազդեցություն ՀՆԱ վրա, հետևաբար, արտահանման ծավալների աճն արդեն դրական երևույթ է տնտեսության համար: Մյուս կողմից՝ տնտեսության արտահանելի հատվածի զարգացումը կարևորվում է երկրի արտարժույթային եկամուտների ապահովման տեսանկյունից: Այսպես, արտահանողները, վաճառելով ապրանքը արտերկրում, ձեռք են բերում արտարժույթ, որը ներքին տնտեսությունում փոխարինում են դրամով՝ հետագա արտադրության կազմակերպման ծախսերը հոգալու համար: Արդյունքում ներքին տնտեսությունում ձևավորվում է արտարժույթի պաշար, որը բավական կարևոր է, և կարող է օգտագործվել ինչպես ներմուծված ապրանքների դիմաց վճարումներ կատարելու համար, այնպես էլ ֆինանսական համակարգի կայունության ապահովման, արտաքին պարտքի սպասարկման և այլ կարևոր նպատակների համար:

Ելնելով վերոհիշյալից՝ այսօր երկրների մեծ մասը վարում է արտահանմանը միտված քաղաքականություն՝ նպատակ ունենալով ապահովել տնտեսական աճ և դրա հաշվին մեծացնել բարեկեցության մակարդակը:

¹ G. V. Vijayasri, “The importance of international trade in the world”, International Journal of Marketing, Financial Services & Management Research, Vol.2, No. 9, 2013, pp. 111-115.

² United Nations Conference on Trade and Development, “Determinants of Export Performance”, 2005, pp. 49-52.

³ United Nations Development Programme “Towards Human Resilience: Sustaining MDG Progress in an Age of Economic Uncertainty”, 2011, pp. 20-25.

2. ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ


Հայաստանը, լինելով համաշխարհային տնտեսության մասը, անմասն չէ աշխարհի տնտեսական զարգացումներից: 2003 թվականից ՀՀ-ն անդամակցում է Առևտրի համաշխարհային կազմակերպությանը, ինչն ունի մեծ տնտեսական նշանակություն, քանզի ԱՀԿ-ին անդամակցությունը նպաստում է ՀՀ որդեգրած քաղաքականության իրականացմանը՝ տնտեսության ազատականացման և համաշխարհային տնտեսությանն ինտեգրման ուղղությամբ: ՀՀ-ն երկար տարիներ շարունակ վարում է արտահանմանը միտված քաղաքականություն, որին զուգահեռ ստեղծվել են նաև արտահանման համար նպաստավոր պայմաններ՝ Եվրոպական միության տարածքում «GSP+» արտոնյալ ռեժիմի իրավունքը, Եվրասիական տնտեսական միությանը անդամակցությունը, մի շարք երկրների հետ ազատ առևտրի համաձայնագրերի առկայությունը և այլն: Արտահանման տեսանկյունից ՀՀ տնտեսության կարևոր գրավականներից են կրթության և գիտության, տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների, ադամանդագործության և ոսկերչության, ֆինանսական և առողջապահության, հանքագործական արտադրանքի, թեթև արդյունաբերության և մի շարք այլ ոլորտներ:

Չնայած Հայաստանի՝ արտահանմանը միտված քաղաքականությանը և արտահանման զարգացման առկա հնարավորություններին, ՀՀ-ում ներմուծման ծավալները ավանդաբար մշտապես գերազանցել են արտահանման ծավալներին, ինչի հետևանքով ձևավորվել է բացասական առևտրային հաշվեկշիռ (Գծապատկեր 1): 2006-2014թթ. ապրանքների և ծառայությունների ներմուծման ծավալները մոտ 2 անգամ գերազանցել են արտահանմանը՝ ձևավորելով միջին հաշվով մոտ 2.2 մլրդ դոլար բացասական առևտրային հաշվեկշիռ: Պատկերը փոքր-ինչ բարելավվել է 2015-2016թթ.՝ կապված ներմուծման ծավալների կրճատման հետ: 2017-2018թթ. գրանցվել է արտահանման ծավալների աճ, որը, սակայն, ուղեկցվել է նաև ներմուծման ծավալների առաջանցիկ աճով, ինչն էլ հանգեցրել է առևտրային հաշվեկշռի վատթարացմանը, որը շարունակվել է նաև 2019թ. առաջին եռամսյակում՝ կապված արտահանման ծավալների կրճատմամբ: Առևտրային հաշվեկշռի բարելավման հիմնական ուղղությունը արտահանման աճի խթանումն է, քանի որ ներմուծման ծավալների փոփոխությունը կապված է ներքին պահանջարկի փոփոխությունների հետ:

3. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՀՀ-ՈՒՄ

Վերջին տարիներին ՀՀ-ին բնորոշ է արտահանման ծավալների աճի բավական բարձր տատանողականություն: Արտահանման ամենախոշոր անկումը տեղի է ունեցել 2009թ.⁴ համաշխարհային ճգնաժամի հետևանքով: Այնուհետև արտահանման 4.0 տոկոս բացասական ցուցանիշ է արձանագրվել 2015թ., ինչը պայմանավորված էր Ռուսաստանի նկատմամբ կիրառված պատժամիջոցների հետևանքով ՌԴ տնտեսության անկմամբ: Նշված անկումից հետո 2016-2017թթ. ՀՀ-ում գրանցվել են արտահանման բավականին բարձր աճի տեմպեր, ինչը, սակայն, երկար չի տևել և 2018թ. արտահանման ծավալների աճն արդեն դանդաղել է (Գծապատկեր 2):


Գծապատկեր 1. Ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման ծավալները ՀՀ-ում, մլրդ դրամ^{4,5}



⁴ Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, «ՀՀ վճարային հաշվեկշիռ»:


⁵ Ապրանքների և ծառայությունների ներմուծման տվյալները պատկերված են բացասական (-) նշանով, որպեսզի ակնհայտ լինի զուտ արտահանմանը (առևտրային հաշվեկշիռ) բացասական նպաստումը:

Գծապատկեր 2. Արտահանման ծավալների տարեկան աճը, 2005-2018թթ., %⁶



Արտահանման աճի նվազման միտումը շարունակվում է նաև 2019-ին: Այսպես, 2019թ. առաջին երկու ամիսներին արտահանման կուտակային աճը երկնիշ բացասական թիվ էր: Թեև մարտ ամսվանից սկսած՝ արտահանման բացասական աճի միտումը գնալով կրճատվում է, այդուհանդերձ, նախորդ տարվա համեմատ իրավիճակը զգալի տարբերվում է: Այսպես, 2019թ. հունվար-հուլիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արտահանման ծավալը աճել է 3.0 տոկոսով՝ այն պարագայում, երբ նույն ցուցանիշը 2018թ. կազմել էր 17.6 տոկոս (Գծապատկեր 3):

Գծապատկեր 3. Արտահանման ծավալների կուտակային աճը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ), 2018-2019թթ., %⁷



Արտահանման ծավալների տատանողականությունն առկա է նաև ծառայությունների արտահանման դեպքում: 2017-ին, ինչպես նաև 2018թ. առաջին


⁶ Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի և հեղինակի հաշվարկները:

⁷ Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի:

եռամսյակում ծառայությունների արտահանումը գրանցել է զգալի աճ՝ համապատասխանաբար 19.6% և 15.7%: Բարձր աճերին հիմնականում նպաստել են տուրիզմը, SS ոլորտի և տրանսպորտային ծառայությունների արտահանման աճերը: Պետք է նշել, որ այս ժամանակահատվածում աճել են ծառայությունների արտահանման գրեթե բոլոր ենթաճյուղերը:

2018թ. երկրորդ եռամսյակից սկսած՝ ծառայությունների արտահանման աճի տեմպը սկսել է նվազել՝ 2018թ. տարեվերջին կազմելով 7.5 տոկոս, իսկ 2019թ. առաջին եռամսյակում արտահանման ծավալների աճը եղել է բացասական՝ կազմելով -2.2 տոկոս: Հատկանշական է, որ 2018թ. աճի տեմպի դանդաղումը առավելապես պայմանավորված էր շինարարական ծառայությունների արտահանման նվազմամբ, տրանսպորտային ծառայությունների արտահանման աճի զգալի դանդաղմամբ, ինչպես նաև ներգնա տուրիզմի և SS ծառայությունների արտահանման ծավալների նվազմամբ: Այս միտումները շարունակվել են նաև 2019թ. առաջին եռամսյակում՝ հանգեցնելով ընդհանուր ծառայությունների արտահանման ծավալների անկմանը (Գծապատկեր 4):

Գծապատկեր 4. Ծառայությունների արտահանման ծավալների աճը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ) և նպաստումները, 2005-2018թթ., %⁸




Արտահանման ծավալների վրա ազդեցություն ունեցող կարևոր գործոն է փոխարժեքը: Քանի որ ՀՀ արտաքին առևտուրը իրականացվում է մի քանի փոխարժեքներով (հիմնականում՝ դոլար, ռուբլի, եվրո), ապա անհրաժեշտ է ուսումնասիրել արդյունավետ փոխարժեքը (անվանական և իրական), որն իրենից ներկայացնում է հիմնական առևտրային գործընկեր երկրների արժույթների նկատմամբ դրամի փոխարժեքը և ձևավորվում է այդ փոխարժեքների կշռված միջինը հաշվելու միջոցով: Իրական արդյունավետ փոխարժեքը իրական փոխարժեքների միջին կշռված ինդեքսն է: Իրական փոխարժեքի արժևորումը

⁸ Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ, «Վճարային հաշվեկշիռ» և հեղինակի հաշվարկները:

նշանակում է, որ Հայաստանում արտադրված ապրանքները դառնում են ավելի թանկ՝ կորցնելով մրցունակությունը, ինչի արդյունքում նվազում է արտահանումը և մեծանում է ներմուծումը: Այսպիսի երևույթ ենք նկատում 2019թ. առաջին եռամսյակում: Իրական արդյունավետ փոխարժեքը առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ արժևորվել է 6.0 տոկոսով (Գծապատկեր 5): Հատկանշական է, որ նույն ժամանակահատվածում արտահանման ծավալները կրճատվել են 8.5 տոկոսով: Այսպիսով մրցունակության անկումը կարևոր դեր է խաղացել ՀՀ արտահանման զարգացումներում:

Գծապատկեր 5. Իրական և անվանական արդյունավետ փոխարժեքների կուտակային աճը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ), (աճը = արժևորում)⁹




4. ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2019թ. հունվար-հուլիս ամիսներին արտահանման կառուցվածքը դիտարկելիս ակնհայտ է, որ ամենամեծ կշիռը (58.3 տոկոս) բաժին է ընկնում միջանկյալ սպառման ապրանքներին, որոնք ունեցել են 2.1 տոկոսային կետով դրական նպաստում արտահանման աճին: Միջանկյալ սպառման ապրանքներից արտահանմանը հիմնականում դրական նպաստում են ունեցել արդյունաբերական մատակարարումները՝ 2.0 տոկոսային կետով: Վերջնական սպառման ապրանքները կազմել են ընդհանուր արտահանման 37.2 տոկոսը և արտահանման աճի նկատմամբ ունեցել են -1.1 տոկոսային կետով բացասական նպաստում: Սակայն վերջնական սպառման ապրանքների կազմում ընդգրկված սննդամթերքը և խմիչքները արտահանմանը 1.5 տոկոսային կետով դրական են նպաստել: Արտահանման կառուցվածքում այլ ապրանքների մասնաբաժինը ընդհանուր արտահանման մեջ կազմել է 4.5 տոկոս:

⁹ Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ, «Իրական և անվանական արդյունավետ փոխարժեքները» և հեղինակի հաշվարկները:

2019թ. հունվար-հուլիս ամիսներին արտահանման ծավալների 3.0 տոկոս աճը հիմնականում պայմանավորված է «սարքեր և ապարատներ», «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «քիմիական արտադրանք», «պատրաստի սննդի արտադրանք», «սարքավորումներ» և «բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբերի ապրանքների արտահանման ծավալների ավելացմամբ (Աղյուսակ 1): Փոխարենը՝ արտահանման կառուցվածքում հիմնականում նվազում է գրանցել «մանածագործական իրեր», «տարբեր արդյունաբերական ապրանքներ», «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «հանքահումքային արտադրանք» և «կենդանի կենդանիներ» ապրանքախմբերի արտահանման ծավալների կրճատումը:

Աղյուսակ 1. 2019թ. հունվար-հուլիս ամիսների ՀՀ արտահանման ապրանքային կառուցվածքը և նպաստումները ընդհանուր արտահանման աճին¹⁰




5. ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արտահանման աշխարհագրական ուղղություններն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ ՀՀ արտահանումը վերջին տարիներին հիմնականում ուղղված է եղել դեպի ԱՊՀ և ԵՄ երկրներ (Գծապատկեր 6): Ընդ որում, եթե 2017թ. ընդհանուր արտահանման կառուցվածքում դեպի ԵՄ երկրներ արտահանման կշիռը (28.3

¹⁰ Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, հեղինակի հաշվարկները:

տոկոս) գերազանցում էր դեպի ԱՊՀ երկրների արտահանման կշիռն (26.6 տոկոս), ապա սկսած 2018-ից իրավիճակը հակառակն է: Այսպես, 2018թ. ընդհանուր արտահանման մեջ դեպի ԱՊՀ երկրների արտահանման կշիռը կազմել է 29.8 տոկոս, իսկ դեպի ԵՄ՝ 28.3 տոկոս: Իր հերթին, դեպի ԱՊՀ երկրների արտահանման մեջ հիմնական կշիռը պատկանում է ԵԱՏՄ երկրներին, որոնց շարքում ամենամեծ բաժինը պատկանում է Ռուսաստանին: Դեպի ԵՄ արտահանման ծավալների մեծ մասը բաժին է ընկնում Գերմանիային, Բուլղարիային, Բելգիային, Իտալիային, Ռումինիային և Նիդերլանդներին:

Գծապատկեր 6. ՀՀ արտահանման աշխարհագրական ուղղությունները¹¹



2019թ. ևս նախորդ տարվա համեմատ արտահանման աշխարհագրական կառուցվածքում նկատելի են որոշ փոփոխություններ: Մասնավորապես, նվազել են արտահանման ծավալները դեպի ԵՄ երկրներ, Արաբական Միացյալ Էմիրություններ, Իրան և ԱՄՆ, սակայն աճել է արտահանումը դեպի ԱՊՀ, մասնավորապես՝ ՌԴ, և այլ երկրներ (Աղյուսակ 2): ԵՄ երկրների շարքում կրճատվել են արտահանման ծավալները դեպի հիմնական գործընկեր երկրներ՝ Ռումինիա (-100%), Գերմանիա (-56.1%), Բուլղարիա (-26.3%) և Բելգիա (-11.7%) որը հիմնականում պայմանավորված է հանքարդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալների կրճատմամբ: Դեպի Իրան արտահանման կրճատումը պայմանավորված է էլեկտրաէներգիայի արտահանման կրճատմամբ, որի պատճառը կարող է լինել ատոմային էլեկտրակայանի ռեակտորի աշխատանքի դադարեցումը: Արտահանման ծավալները դեպի ՌԴ աճել են պատրաստի սննդի ապրանքախմբերի արտահանման աճի հաշվին, իսկ դեպի Չինաստան՝ «հանքաքար, խարամ և մոխիր» ապրանքախմբի արտահանման աճի հաշվին: Այսինքն՝ ստացվում է, որ հանքաքարի արտահանումը բավական մեծ չափով տեղափոխվել է ԵՄ-ից դեպի Չինաստան:

¹¹ Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե:

Աղյուսակ 2. ՀՀ 2019թ. հունվար-հուլիս ամիսների արտահանման աշխարհագրական կառուցվածքը¹²

Երկիր	Արտահանման ծավալները, մլն. դոլար	Կշիռ, %	Աճը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ), %	Նպաստումը
ԱՊՀ	415.4	29.3	10.0	2.8
ԵԱՏՄ	397.7	28.1	8.9	2.4
ՌԴ	386.3	27.3	9.4	2.4
ԵՄ ԵՐԿՐՆԵՐ	334.1	23.6	-22.7	-7.1
Ռումինիա	0.0	0.0	-100.0	-3.1
Գերմանիա	40.6	2.9	-56.1	-3.8
Բուլղարիա	105.2	7.4	-26.3	-2.7
Բելգիա	28.6	2.0	-11.7	-0.3
Նիդերլանդ.	95.4	6.7	40.3	2.0
Այլ երկրներ	668.0	47.1	17.9	7.4
ԱՄՆ	30.4	2.1	-14.3	-0.4
ԱՄԷ	34.7	2.4	-34.9	-1.4
ԻԻՀ	42.0	3.0	-25.2	-1.0
Շվեյցարիա	237.2	16.7	25.3	3.5
Չինաստան	105.5	7.4	72.6	3.2
ԸՆԴԱՄԵՆԸ	1417.5	100.0	3.0	3.0

6. ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ արտահանման դինամիկան դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ արտահանման ծավալները նախորդ տարվա համեմատությամբ բավականին զիջում են. 2019թ. սկզբներին նվազել էին երկնիշ բացասական ցուցանիշներով: Թեև սկսած հունիս ամսվանից՝ որոշ դրական միտումներ են նկատվում, այդուհանդերձ իրավիճակը ահազանգող է: Վերջին ժամանակահատվածում նվազել են արտահանման ծավալները ՀՀ-ից դեպի ԵՄ, ԱՄՆ, Արաբական Միացյալ Էմիրություններ և Իրանի Իսլամական Հանրապետություն, փոխարենը՝ ավելացել են դեպի Չինաստան և ԱՊՀ երկրներ, մասնավորապես՝ Ռուսաստան:

Արտահանման ծավալների նվազում առկա է ինչպես «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի, այնպես էլ «մանածագործական իրեր», «տարբեր արդյունաբերական ապրանքներ», «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «էլեկտրաէներգիա» և «կենդանի կենդանիներ» ապրանքախմբերի դեպքում:

ՀՀ արտահանման քաղաքականության կարգավորման տեսանկյունից անհրաժեշտ է զարգացնել տնտեսության արտահանելի հատվածները՝ ապահովելով արտահանման կառուցվածքի և ուղղությունների դիվերսիֆիկացիան,

¹² Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե:

Կիրառելով մի շարք գործիքներ և մեխանիզմներ, որոնք այսօր արդեն իսկ լայն տարածում ունեն միջազգային շուկայում: Ինչ վերաբերում է բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրության և արտահանման զարգացմանը, որն ինչպես բազմաթիվ երկրներում, այնպես էլ Հայաստանում ռազմավարական մեծ դեր ու նշանակություն ունի, ապա այս ուղղությամբ պետք է ծրագրային մակարդակով քայլեր ձեռնարկվեն:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: